*Հաստատված է Կոտայքի մարզի*
*Գառնիի գյուղական համայնքի*
*ավագանու 2013թ.հունվարի 14-ի*
*թիվ 5 որոշմամբ*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ*

## *ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ Գ. ԳԱՌՆԻ*




## *ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ*
## *2013-2016 թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ*

# *ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ*

Կազմեց՝ համայնքի ղեկավարի և աշխատակազմի կողմից
Հաստատվել է համայնքի ավագանու _2013թ. թիվ 1__ նիստում

ԳԱՌՆԻ 2013Թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:

Հավելված 1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:

Հավելված 2. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

# Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

### 1.1. Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Գառնի պատմական գյուղը գտնվում է Կոտայքի մարզում, Երևան քաղաքից 25կմ, մարզկենտրոնից 78կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից 1480մ բարձրության վրա: Գյուղը շրջափակված է Գեղամա լեռներով, որից սկիզբ է առնում Ազատ գետը: Գետի աջակողմյան եռանկյունաձև հրվանդանի վրա է Գառնիի 24 բազալտյա սյուներով հրաշակերտ հեթանոսական տաճարը: Տաճարը կառուցվել է 77 թվականին և կանգուն է մնացել 1600 տարի:

1679թ.-ի հունիսի 4-ի կործանարար երկրաշարժից փլվել է:

1909-1911թթ.-ին անվանի գիտնական Նիկողայոս Մառը տաճարի հիմքի մոտ է հավաքել ցիրուցան եղած քարերը, հուսալով, որ մի օր կվերկանգնվի հրաշալի այս կառույցը: Գառնիի տաճարը վերականգնվել է ճարտարապետ Ա.Սահինյանի նախագծով և անմիջական ղեկավարությամբ 1969-1975թթ.-ին: Այո, հին է Գառնի անունը, որով կոչվել է նաև ամրոցն ու կողքի գյուղաքաղաքը: Պատմահայր Մովսես Խորենացին գրում է, որ այս բնակավայրը հիմնադրել է Հայկ Նահապետի ծոռ Գեղամը, որի թոռան Գառնիկի անունով էլ կոչվել է Գառնի: 17-րդ դարի 2-րդ կեսին Գառնի են գաղթել Մակվից:

2012թ վերակառուցվեց ազատ գետի վրա 12-րդ դարում կառուցված կամարա կամուրջը, որի անմիջական հարևանությամբ է գտնվում <<Քարերի սիմֆոնյա>> և ջութակասար բնապատմական արժեք ներկայացնող հուշարձանները: Ազատ գետի կիճը որը համարվում է ոչ նյութական արժեք և գրանցված է յունեսկոյի գրքում: Գառնի համայնքն իր մասնակցությունն է ունեցել առաջին հանրապետության ստեղծմանը, Հայրենական մեծ պատերազմից հետ չվերադարձան 361 գառնեցիներ, Ղարաբաղյան ազատամարտում իրենց կյանքը զոհեցին 13 գառնեցիներ: Կարելի է ասել, բաց թանգարան է երկնքի տակ:

1980թ.-ից այստեղ անց են կացվում երգ ու պարի ամենամյա փառատոններ: Երևան-Գառնի-Գեղարդ մայրուղիով, չնայած դրա վթարային վիճակին, մեծ թվով զբոսաշրջիկներ են այցելում այս հոյակերտ տեսարժան վայրերը:

Գառնիի գյուղական համայնքի վարչական տարածքը 5762,0 հա է:

## 1.2. Ժողովրդագրություն

Գառնի գյուղում ապրում են 8100 մարդ, որից տղամարդ՝ 4000, կին՝ 4100: Համայնքի տնտեսությունների թիվը 1900 է:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է `

1. երեխաներ (0-6 տ) - 674
2. դպրոցական (7-17 տ) - 1491
3. 18 - 65 տարեկան - 4413
4. թոշակառուներ (65 տ.-ից բարձր) - 899
5. հաշմանդամներ - 11
6. աշխատունակներ - 4730
7. փախստականներ - 2
8. նպաստառուներ - 180
9. գործազուրկներ - 200
10. գրանցված ընտրողների թիվը - 5774

## 1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ,ՈՐՆ ԸՆՏՐՎՈՒՄ Է ՉՈՐՍ ՏԱՐԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ:

Գառնիի Գյուղական համայնքի աշխատակազմը ունի հետևյալ կառուցվածքը`

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ |
|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 |
| ԱՇԽԱՏԱԿԱԶՄ | |
| Աշխատակազմի քարտուղար | 1 |
| Գլխավոր մասնագետ | 2 |
| Առաջատար մասնագետ | 3 |
| Առաջին կարգի մասնագետ | 2 |
| Երկրորդ կարգի մասնագետ | 2 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐ | |
| Օպերատոր | 2 |
| Քարտուղարուհի | 1 |
| վարորդ | 2 |

ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| N | Հաստիքը | հաստիքի միավորը |
|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 |
| 2 | Քարտուղարուհի | 1 |
| 3 | Հաշվապահ | 1 |
| 4 | Գանձապահ գործավար | 1 |
| 5 | Ավագ մենեջեր | 1 |
| 6 | Մենեջեր | 3 |
| 7 | Եռակցող | 1 |
| 8 | փականագործ | 3 |
| 9 | Բանվոր | 1 |
| 10 | Կանաչատման բանվոր | 2 |
| 11 | Հավաքարար | 1 |
| 12 | Պահակ | 1 |
| 13 | Կանաչապատման և սանիտարական մաքրման | 1 |

| | պատասխանատու | |
|---|---|---|

ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ՝

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| N | Պաշտոնը | Դրույք |
|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 |
| 3 | Գեղմասվար | 1 |
| 4 | Մեթոդիստ | 2 |
| 5 | Գրադ. վարիչ | 1 |
| 6 | Գրադարանավար | 3 |
| 7 | Տեխ. աշխատող | 2 |
| 8 | Պահակ | 1 |
| 9 | Խմբավար | 4 |

ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈ

| N | Դրույք | Դրույք |
|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1դր |
| 2 | հաշվապահ | 1դր |
| 3 | Տեխ. աշխատող | 1դր |
| 4 | գործավար | 1դր |
| 5 | Դասատու | 6րդ |

ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

| Հ/Հ | Պաշտոնը | Հաստիքային միավորների քանակը |
|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 |
| 2 | Ուսմասվար | 1 |
| 3 | Հաշվապահ | 1 |
| 4 | Սոլֆեջո | 1դր.1ժ. |
| 5 | Դասատու | 10դրույք 1ժ. |
| 6 | Դաշնամուր լարող | 1 |
| 7 | Պահակ | 1 |
| 8 | Հավաքարար | 1 |
| 9 | Գործավար | 1 |

ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

| | |
|---|---|
| Տնօրեն | 1դր. |
| Դաստիարակ | 3դր. |
| Ֆիզկուլտ հրահանգ | 0.5դր. |
| Երաժիշտ | 1դր. |
| Բուժքույր | 1դր. |
| Գլխ. հաշվապահ | 1դր. |
| Խոհարար | 1դր. |
| Խոհարարի օգն. | 0.5դր. |
| Տնտեսվար | 0.5դր. |
| Աման լվացող | 0.5դր. |
| Դռնապահ | 1դր. |
| Դայակ | 3դր. |
| Դերձակ | 0.5դր. |
| Լվացքարար | 1դր. |
| Գործավար | 0.5դր. |
| Գիշեր. պահակ | 1դր. |
| Պարուսույց | 0.5դր |

## 1.4. Համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ֆիզիկական վիճակը

Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է,խմելու ջրի ներհամայնքային համակարգը, որը կառուցվել է 1964թ.-ին, նրա մաշվածությունը այնքան մեծ է, որ ջրի կորուստները կազմում է 40%: Նույն վիճակում է ոռոգման համկարգը: Վերանորոգման կարիք ունի Համայնքային ենթակայության ճանապարհները: Անհրաժեշտ է կատարել ճանապարհների լուսավորման, մշակույթի տան հիմնական նորոգման աշխատանքներ:

## 1.5. ԲՆՈՒԹՅԱՆ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենցաղային աղբի կուտակման համար հմայնքում առանձնացվել է տարացք, տեղադրված են շուրջ 70 աղբամաներ: Աղբը հեռացվում է վարձակալված աղբատար մեքենա: Աիրաժեշտ է ձերք բերել սեփական աղբատար մեքենա,ստեղծել կանաչապատման և սան մաքրման բաժին համայքի տարածքը մաքուր պահելու համար, ինչպես նաև արտակարգ իրավիճակների բաժին համայնքի տարածքում հրդեհները մարելու ինչպես նաև արտակարգ իրավիճակների պատճառով այլ գործողություններ կազմակերպելու համար:

## 1.6 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 9200քմ. 1975 բնակարանով:

## 1.7.Հողատարածքների օգտագործում

- Համայնքի վարչական տարածքը - 5874.93 հա
- վարելահողեր՝ սեփականաշնորհված - 575.95 հա
- տնամերձ հողամասեր - 375 հա
- արոտավայրեր - 3385.17 հա
- խոտհարքներ - 184.15 հա
- համայնքային պահուստային հողեր - 3920 հա
- մեկ հողաբաժնի չափը՝ ջրովի հողատեսքերը ներառյալ
- պտղատու այգիներ և տնամերձները - 0,24 հա
- անջրդի վարելահող - 0,12 հա
- խոտհարք - 0,065 հա

## 1.8. Գյուղատնտեսություն

Համայնքում զբաղվում են անասնապահությամբ, այգեգործությամբ: Համայնքի բնակչության զբաղվածությունը գյուղացիական տնտեսություններում կազմում է 80%:

Համայնքն ունի 2590 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 2770 գլուխ ոչխար, 1350 գլուխ խոզ, 15000 թրչուն: Համայնքն արտադրում է պանիր, կաթ, մածուն, միս, միրգ:

## 1.9 Կրթություն

Գյուղն ունի 1 ավագ և 2 հիմնական դպրոցներ՝ վերջին տարիներին վերանորոգված, բարվոք վիճակում, ուր սովորում են 1481 երեխաներ, ուսուցիչների թիվը՝ 80, այլ աշխատողների՝ 60 մարդ:

Մսուր-մանկապարտեզն ունի 150 մահճակալ,

երեխաների թիվը - 120

դաստիարակներ - 10

այլ աշխատողներ - 15

## 1.10.Մշակույթ, սպորտ, հոգևոր դաստիարակություն

Համայնքն ունի մշակույթի տուն՝ գրադարան, երաժշտական դպրոց, արվեստի դպրոց:

## 1.11.Առողջապահություն

Գյուղում գործում է առողջական կենտրոն համապատասխան պոլիկլինիկայով և հիվանդանոցով որտեղ աշխատում են 57 աշխատողներ:

Առողջական կենտրոնը ունի ռենտգեն կաբինետ, շտապօգնության մեքենա:

## 1.12. Համայնքի ուժեղ կողմերը

- Համայնքը գտնվում է գեղատեսիլ մի վայրում, ուր կան պատմամշակութային շատ արժեքներ, որը հնարավորություն է տալիս ստեղծել տուրիստական մի շրջան, ուր կարելի է ստեղծել փոքր և միջին բիզնեսի կետեր, հանգստյան տներ:
- Համայնքում կան մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, որոնց վերագործարկման դեպքում համայնքում կավելանան նոր աշխատատեղեր:

## 1. 13.Համայնքի թույլ կողմերը

- Ներքին ճանապարհների անմխիթար վիճակը:
- Խմելու ջրի, ոռոգման համակարգերի վերանորոգման խիստ անհրաժեշտությունը:
- Աշխատատեղերի բացակայությունը:
- Գյուղմթերքների արտադրությունն ու իրացումը բնակչության եկամուտների տարեցտարի նվազումը:

## 1. 14.Համայնքի հնարավորությունները

- Ոռոգման համակարգի վերանորոգման դեպքում նոր հողատարածքների մշակման հնարավորություն:
- Ֆերմերային տնտեսությունների կազմակերպման դեպքում կստեղծվեն նոր աշխատատեղեր:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**Ռազմավարությունը**

Բարելավել համայնքի բնական սոցիալ-տնտեսական պայմանները, աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը, գյուղը դարձնել բարեկարգ, մաքուր և գրավիչ բնակավայր:

**Հիմնական նպատակները**

- Բարելավել համայնքի խմելու ջրի ջրամատակարարումը:
- Համայնքն ապահովել ոռոգման ջրի կանոնավոր ջրամատակարարումով:
- Կազմակերպել համայնքում աղբահեռացման աշխատանքները, ապահովել մաքրություն:
- Բարեկարգել ներհամայնքային ճանապարհները և փողոցները:

## 3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

### ԾՐԱԳԻՐ 1
### Խմելու ջրի նոր ջրագծի անցկացում

Նպատակ

Բնակչությանը ապահովել շուրջօրյա խմելու ջրով:

Խնդիր 1

Մինչև 2016թ. Բարերարների օգնությամբ Փոխել խմելաջրի ներքին ցանցը ամբողջությամբ, իրականացնել նոր ջրագծի 7 կմ երկարության հատվածի շինարարությունը համագործակցելով Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ:

### ԾՐԱԳԻՐ 2
### Ոռոգման ջրատարի հիմնական նորոգում

Նպատակ

Կանխել ոռոգման ջրի մեծ կորուստները և համայնքին ապահովել անխափան ջրամատակարարումով:

## ԾՐԱԳԻՐ 3
## Ներհամայնքային ճանապարհների նորոգում

Նպատակ

Գյուղը դարձնել մաքուր և բարեկարգ:

Խնդիր 1

Մինչև 2016թ. համայնքի բյուջեի և դոնոր կազմակերպության համատեղ միջոցներով իրականացնել 10000 քմ մակերեսով ներհամայնքային ճանապարհների վերանորոգում:

## ԾՐԱԳԻՐ 4

Սեսմիկ ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակների գծով:

1. Ստեղծել հակահրդեհային հենակետ
2. Ապահովել քարաթափման անվտանգությունը Գառնիի 3-րդ թաղամասի ճանապարհին և Գառնիի ձոր տարածքի ժայռերից առանձնացված փլուզումներից
3. Սիստեմատիկաբար ուսումնասիրել տարածքում բազմաբնակարան շենքերի սեսմակայունությունը և միջոցներ ձեռնարկել անվտանգությունը ապահովելու համար

# 2013-2016Թ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐՈՎ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| ՀՀ | Ծրագրի, միջոցառման, աշխատանքի անվանումը | Չափի միավոր | Ծավալը | Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ.դրամ/ | Ֆինանսավորման աղբյուրները | | | Կատարման ժամկետները | | | | Պատաս-խանա-տուն | Ծանո-թություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | համայն-քի բյուջե | դոնոր կազմ. | այլ (պետ. բյուջե և այլն) | 2003թ. Ծավալ/ Ֆին. միջ. | 20014թ. Ծավալ/ Ֆին. միջ. | 20015թ. Ծավալ/ Ֆին. միջ. | 2016թ Ծավալ/ Ֆին. միջ. | | |
| 1. | Ոռոգման ջրատարի հիմնական նորոգում | կմ | 6 | 60000 | - | 60000 | | 1,5կմ/ 15000 | 1,5կմ/ 15000 | 1,5կմ/ 15000 | 1,5կմ/ 15000 | Համ. ղեկավար | ՀՊԾ ՍԱԴ |
| 2. | Ներհամայնքային ճանապարհների նորոգում | մ$^2$ | 10000 | 80000,0 | 30000,0 | 50000,0 | | 2500 200000 | 2500 20000 | 2500 20000 | 2500 20000.0 | Համ. ղեկավար | |
| 3. | Մշակույթի տուն | | | 50000 | 25000 | 25000 | | 25000 | 25000 | | | | |
| 4. | Խմելու ջրի նոր ջրագծի անցկացում | կմ | 7 | համաձայն նախահաշվի | 50% | 50% | | 3կմ/ համ.նախ | 4կմ | | | | |
| 5. | Խմելա ջրի ներքին ցանցի հիմնական վերանորոգում | կմ | 40 | համաձայն նախահաշվի | 0 | 100% | | 5 | 10 | 10 | 15 | | |
| 6. | Փողոցների լուսավորություն | կմ | 10 | համաձայն նախահաշվի | 50% | 50% | | 2.5 | 2.5 | 2.5 | 2.5 | | |
| 7. | | | | | | | | | | | | | |
| 8. | | | | | | | | | | | | | |

## 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Կոտայքի մարզի Գառնի համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

(հազ. դրամ)

| ՀՀ | Մուտքերի անվանումը | 2012թ. կանխատեսում | 2013թ. նախատեսված | 2014թ. կանխատեսում | 2015թ. կանխատեսում | 2016թ. կանխատեսում |
|---|---|---|---|---|---|---|
| I. | ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆ. ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | 94321, | 108107,1 | 108107,1 | 108107,1 | 108107,5 |
| Ա | ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 10411,2 | 12852.1 | 12852.1 | 12852.1 | 12852.1 |
| Ա.1 | ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 10741,1 | 12852.1 | 12852.1 | 12852.1 | 12852.1 |
| 1. | ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 9525,1 | 9525,1 | 9525,1 | 9525,1 | 9525,1 |
| 1.1 | Հողի հարկ | 6281,2 | 6281,2 | 6281,2 | 6281,2 | 6281,2 |
| 1.2 | Գույքահարկ | 3243,9 | 3243,9 | 3243,9 | 3243,9 | 3243,9 |
| 1.3 | Եկամտահարկ | | | | | |
| 1.4 | Այլ հարկ. եկամուտներ | | | | | |
| 2 | ՏՈՒՐՔԵՐ | 550 | 550 | 550 | 550 | 550 |
| 2.1 | Պետական տուրքեր | | | | | |
| 2.2 | Տեղական տուրքեր | 550 | 550 | 550 | 550 | 550 |
| 3 | ՈՉ ՀԱՐԿ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 886,1 | 975 | 975 | 975 | 975 |
| 3.1 | Համայնքների վարչ. տար.-ում գտնվող հողերի վարձակալ. և օգտագործ դիմաց գանձվող վճարներ | 8761,1 | 965 | 965 | 965 | 965 |
| 3.2 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | | | | | |
| 3.3 | Վարչական իրավախախտ. համար ՏԻՄ կողմից վարչ. պատաս. միջոցների կիրառումից եկամուտներ | | | | | |
| 3.4 | Տեղական վճարներ | | | | | |
| 3.5 | Այլ ոչ հարկ. եկամուտ. | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| Ա.2 | ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԿԱՊԻՏԱԼԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ | | | | | |
| Բ | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | 83369,9 | 97057,4 | 75278.4 | 75278.4 | 75278.4 |
| Բ.1 | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | 82972,5 | 96681,0 | 96681,0 | 96681,0 | 96681,0 |
| Բ.2 | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ | 397,4 | 376,4 | 376,4 | 376,4 | 376,4 |
| II. | ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ | | | | | |
| | ՄՈՒՏՔԵՐ, ԸՆԴԱՄԵՆԸ | 94321,1 | 108107,1 | 108107,1 | 108107,1 | 108107,1 |

# 5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| ՀՀ | Ցուցանիշներ | Չափի միավոր | 2013թ. փաստ | 2014թ. փաստ | 2015թ. փաստ | 2016թ. կանխ |
|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Համայնքի տարածքը | հա | 5762 | 5762 | 5762 | 5762 |
| 2 | Բնակչության թիվը | մարդ | 8060 | 8080 | 8110 | 8120 |
| 3 | Ծնունդը | մարդ | 110 | 120 | 130 | 140 |
| 4 | Մահացությունը | մարդ | 50 | 50 | 50 | 50 |
| 5 | Աշխ. ռեսուրսները, այդ թվում | մարդ | 4800 | 4820 | 4840 | 4850 |
| | ա) զբաղվածները ըստ տնտեսության ճյուղերի | մարդ | 4200 | 4500 | 4500 | 4600 |
| 6 | Գործազրկության մակարդակը | % | 12,5 | 12 | 11 | 11 |
| 7 | Առևտրի և սպասարկումների օբյեկտների թիվը | հատ | 33 | 35 | 40 | 45 |
| 8 | Պահուստային հողեր | հա | 160 | 160 | 160 | 150 |
| 9 | Պահուստային հողերի օգտագործման մակարդակ | % | 60 | 65 | 70 | 70 |
| 10 | Խմելու ջրի ներհամայնքա - յին ցանցի երկարությունը | կմ | 47,0 | 47 | 50 | 60 |
| 11 | Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը | կմ | 30,0 | 35 | 35 | 35 |
| 12 | Ոռոգման համակարգի տակ գտնվող հողեր | հա | 725 | 725 | 750 | 760 |
| 13 | Ներհամայնքային փողոցնե րի և ճանապարհների երկ. -ը | կմ | 55,0 | 55 | 60 | 65 |
| 14 | Չբարեկարգված փողոցների և ճանապարհների երկար.-ը | կմ | 40,0 | 37 | 35 | 35 |
| 15 | Բնակ. ֆոնդ, այդ թվում | շենք/ հազ.քմ | 1874/ 9,0 | 1900 10 | 1920 11 | 1920 12 |
| | • համայնքային | | | | | |
| | • մասնավոր | | 1874 | 1872 | 1872 | 1874 |
| 16 | Բնակկարիքավոր ընտանիք ների թիվը | ընտ. | 40 | 50 | 70 | 70 |
| 17 | Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը | լ/օր | 80 | 80 | 90 | 90 |
| 18 | Ջրի կորուստները ցանցում | % | 30 | 30 | 20 | 20 |
| 19 | Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում | մարդ | 1580 | 1600 | 1620 | 1630 |
| 20 | Երեխաների թիվը մանկապ.-ում | մարդ | 100 | 100 | 120 | 120 |
| 21 | Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը | մարդ | 75 | 76 | 81 | 83 |
| 22 | Գյուղապետարան | մարդ | 21 | 22 | 22 | 22 |
| 23 | Մ/մանկապարտեզ | մարդ | 20 | 22 | 22 | 22 |
| 24 | Մշակույթի տուն | մարդ | 12 | 12 | 15 | 15 |
| 25 | Երաժշտական դպրոց | մարդ | 14 | 14 | 14 | 16 |
| 26. | Արվեստի դպրոց | մարդ | 5 | 6 | 8 | 8 |
| 27. | Մարզադպրոց | մարդ | 3 | 3 | 3 | 3 |

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

| | |
|---|---|
| 1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը | 1900, այդ թվում |
| ա. անհատական տնտեսություն | 1900 |
| բ. կոլեկտիվ տնտեսություն | -- |
| գ. պետական տնտեսություն | -- |
| 2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը | |
| ա. ցորեն | 1250 ցենտներ |
| բ. գարի | 1000 |
| գ. կարտոֆիլ | 250 |
| դ. կաղամբ | 200 |
| ե. բանջարաբոստ. կուլտ | 600 |
| զ. միրգ | 8000 |
| է. կաթ | 28260 |
| ը. միս | 1000 |
| թ. բուրդ | 30 |
| ժ. ձու | 100000 հատ |
| ի. մեղր | 60 |
| 3. Ցանքատարածությունները | 543 հա |
| ա. հացահատիկ | 150 հա |
| բ. կարտոֆիլ | 20 |
| գ. բանջարաբոստ. կուլտ. | 30 |
| դ. կաղամբ | 5 |
| ե. մրգատու այգի | 304 |
| զ. առվույտ | 180 |
| ը. կորնգան | 20 |
| թ. միամյա խոտեր | 9 |
| 4. Անասնագլխաքանակը, հատ | 5855 |
| ա. խոշոր եղջեր. անասուններ | 3600 գլուխ |
| այդ թվում՝ կովեր | 1700 |
| բ. մանր եղջեր. անասուններ | 1525 |
| այդ թվում՝ մայրեր | 920 |
| գ. խոզեր | 1230 |
| այդ թվում՝ մայրեր | 400 |
| դ. թռչուններ | 11500 թև |
| այդ թվում՝ հավեր | 10000 |
| ե. մեղվաընտանիքներ | 1200 |

5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ
այդ թվում՝

| ա. համայնքային սեփականության | | բ. մասնավոր սեփականության | |
|---|---|---|---|
| թրթուրավոր տրակտոր | | թրթուրավոր տրակտոր | 1 |
| անիվավոր տրակտոր | | անիվավոր տրակտոր | 14 |
| հացահատիկային կոմբայն | | հացահատիկային կոմբայն | 2 |
| խոտհնձիչ կոմբայն | | խոտհնձիչ կոմբայն | 4 |
| բեռն. ավտո. տարբեր մակնշի | | բեռն. ավտո. տարբեր մակնիշի | 10 |
| տրակտորային կցասայլեր | | տրակտորային կցասայլեր | 8 |
| գութաններ | | գութաններ | 4 |
| կուլտիվատորներ | | կուլտիվատորներ | 2 |
| շարքացաններ | | շարքացաններ | - |
| խոտ հակավորող մեքենաներ | | խոտ հակավորող մեքենաներ | 2 |
| պարարտանյութ ցրիչ | | պարարտանյութ ցրիչ | 3 |

կերամանրիչ
այլ

կերամանրիչ
այլ

1
-

*Հավելված 1*

## ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



*Հավելված 2*

## ԳԱՌՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Համայնքի վարչական շենք 1
2. Մշակույթի տուն 1
3. Մսուր-մանկապարտեզ 1
4. Գեղարվեստի դպրոց 1
5. Երաժշտական դպրոց 1
6. Խմելու ջրի ջրամատակարարման ներհամայնքային համակարգ 1
7. Ներհամայնքային ոռոգման համակարգ 1
8. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ 40կմ
9. Ներհամայնքային կամուրջներ 5 հատ
10. Հուշարձան 2
11. Գերեզմանատուն 3